ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման 2020 թվականի ծրագրի իրականացման համար հեղինակային հսկողության ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԾՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի փետրվարի 7-ին կնքված «ՇՄՆ-ԾՁԲ-20/15» ծածկագրով պայմանագրում 2020 թվականի հուլիսի 17-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն», «Անտառային մոնիթորինգի կենտրոն» և «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 20-ի N 552, 2004 թվականի մարտի 18-ի N 349-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 81-Ն որոշում,
Փոփոխության նկարագրություն՝	Փոփոխություններ Պայմանագրի վավերապայմաններում,
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 7.5 կետ, Կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 81-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«07» փետրվարի 2020թ. թիվ ՇՄՆ-ԾՁԲ-20/15 պայմանագրի

ք.Երևան «17» «07» 2020թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Ա.Ավալյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Լ.Ազիզյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2020 թվականի փետրվարի 7-ին կողմերի միջև կնքված «ՇՄՆ-ԾՁԲ-20/15» ծածկագրով պայմանագրի 7.5 կետը և Կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն», «Անտառային մոնիթորինգի կենտրոն» և «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 20-ի N 552, 2004 թվականի մարտի 18-ի N 349-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 81-Ն որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2020 թվականի փետրվարի 7-ի «ՇՄՆ-ԾՁԲ-20/15» ծածկագրով պայմանագրի վավերապայմաններում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1. «Անտառային մոնիթորինգի կենտրոն» բառերը փոխարինել «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» բառերով,

1.1.2. «ք.Երևան, Մամիկոնյանց 39Ա» բառերը փոխարինել «ք.Երևան, Չարենցի 46» բառերով,

1.1.3. «900018003567» հաշվեհամարը փոխարինել «900018003815» հաշվեհամարով,

1.1.4. «01555644» հարկ վճառողի հաշվեհամարը փոխարինել «02825793» հարկ վճառողի հաշվեհամարով,

1.1.5. «Ա.Գյուլխասյան» բառերը փոխարինել «Լ.Ազիզյան» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները տարածվում են 2020 թվականի մայիսի 8-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Չարենցի 46
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007763	ՀՀ 900018003815
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02825793
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Ա.Ավալյան	***Լ.Ազիզյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.